ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ՈՍԿԵՏԱՓԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>
ՀՈԱԿ

ՀՀ Արարատի մարզի, Ոսկետափ բնակավայր Հ.Աբեյան 5
էլ.հասցե- vosketapi.mankapartez.hoak@mail.ru հեռ+37494551066

30.01.2025

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

2025 թվականի հունվարի 9-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի «Ոսկետափի» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Գնորդ/ և «Խաք» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Վաճառող/ միջև կնքվել է կաթնամթերքի մատակարարման «ՈՄ-ԳՀԱՊՁԲ-25/01» ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/:
«ՈՄ-ԳՀԱՊՁԲ-25/01»ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Խաք» ՍՊ ընկերությունը գնման պայմանագրի շրջանակներում 2025 թվականի հունվարի 22-ին ծանուցվել է կնքելու Պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիր: Ընկերությունը սահմանված ժամկետում /15 աշխատանքային օրվա ընթացքում/ չի կնքել համաձայնագիրը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ » պարբերության և 33-րդ կետի 17-րդ կետով սահմանված դրույթներով Վաճառողը համաձայնագիրը կնքում և ներկայացնում է համաձայնագիրը կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ենթակա է գանձման տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները:
<<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով (այն է՝խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը)պատվիրատուի ղեկավարը կայացնում է որոշում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:
«Խաք» ՍՊ ընկերությունը տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները 2025 թվականի հունվարի 27-ին վճարել է վճարման պահանջագրում նշված /900425102093/հաշվի համարին:
Հաշվի առնելով այն հանգամանքը, պատվիրատուի ղեկավարը «Խաք» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի ներկայացնում լիազոր մարմնին:

Տնօրեն՝ Մ.Խաչատրյան